



ԿՈՄՊՈՑԻՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

www.amogroup.am



Ապակեպլաստե կոմպոզիտային նյութերի առավելությունները

Ցածր ծախսատարություն. Ապակեպլաստե պրոֆիլների արժեքը ավելի ցածր է, քան ալյումինի և չժանգոտվող պողպատի պրոֆիլների արժեքը՝ հաշվի առնելով առաքման, մոնտաժման և շահագործման ծախսերի բացակայությունը:

Հակակոռոզիոն դիմադրություն. Պրոֆիլներն ունեն հիանալի հակակոռոզիոն հատկություններ և դիմացկուն են ագրեսիվ միջավայրերի, ներառյալ թթուների, հիմնային միջավայրերի և աղերի նկատմամբ:

Երկարակեցություն. Ապահովում է օգտագործման երկար ժամկետ, չի փոխում իր հատկանիշներն ու տեսքը, դիմացկուն է քիմիական միջավայրերի, ջրի, խոնավության և ջերմաստիճանի տատանումների նկատմամբ:

Կիրառման լայն շրջանակ. Հարմար է շինարարության, նավթաքիմիական արդյունաբերության, ենթակառուցվածքային նախագծերի, ջրային կառույցների, ջրի մաքրման և այլ ոլորտների համար:

Թեթև և դիմացկուն. Ունի մինչև 50 տարի օգտագործման ժամկետ, չի փտում, չի փոխում գույնը և չի քերծվում: 5-6 անգամ ավելի թեթև է, քան պողպատյա մետաղը և 2 անգամ ավելի թեթև, քան դուրալումինը:

Հեշտ մշակում. Հեշտ կտրվում և տեղադրվում է առանց եռակցման կամ բարձրացնող հատուկ տեխնիկայի անհրաժեշտության, հնարավոր են ամրացման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են պտուտակները, սոսինձը կամ գամերը:

Ցածր ջերմային հաղորդունակություն. Ջերմամեկուսիչ հատկությունները համեմատելի են փայտի հետ, բայց ապակեպլաստե պրոֆիլը չի ենթարկվում փտման և դեֆորմացիայի:

Դիէլեկտրիկ հատկություններ. Ապակեպլաստը դիէլեկտրիկ է: Շատ հարմար և անվտանգ է մշտական և փոփոխական հոսանքի հետ աշխատանքների համար:

Տեսականի և գույներ. Առաջարկում ենք ավելի քան 300 տեսակի կոմպոզիտային նյութեր, դետալներ, FRP պրոֆիլներ (ապակեպլաստե պրոֆիլներ): Հնարավոր են նաև տարբեր գույներ:



Կոմպոզիտային շվեյլեր

Կոմպոզիտային շվեյլեր – Ռ-աձև պրոֆիլ է: Շվեյլերի կառուցվածքը ապահովում է դրա ամրությունը և կայունությունը, ինչպես երկայնական, այնպես էլ լայնական բեռնվածքների նկատմամբ: Կոմպոզիտային շվեյլերը դիմացկուն է կոռոզիային, ունի բարձր կարծրություն և հուսալիություն:

Կոմպոզիտային շվեյլեր գնելու, ինչպես նաև նախահաշիվ կազմելու և անհրաժեշտ նյութի քանակը հաշվարկելու հարցում Ձեզ կօգնեն մեր մենեջերները: Նրանք նաև կաջակցեն ձեզ ընտրել նյութեր, որոնք համապատասխանում են անհրաժեշտ տեխնիկական բնութագրերին: Մենք միշտ պատրաստ ենք խորհուրդ տալ Ձեզ այլ տեսակի կոմպոզիտային պրոֆիլների ձեռքբերման և կիրառման վերաբերյալ, որոնք մենք արտադրում ենք:

Օգտագործում

Աստիճանային հարթակներ

Բարձր կայունության և ամրության շնորհիվ ապակեպլաստե շվեյլերը իդեալական է քիմիական արդյունաբերության և աստիճանային հարթակների համար:

Կամուրջներ և անցումներ

Շվեյլերը կիրառվում է հետիոտնային կամուրջների և այլ տեխնոլոգիական կառույցների կառուցման համար՝ ապահովելով կայունություն ագրեսիվ միջավայրերի նկատմամբ:

Պահեստային տարածքներ

Պահեստային կառույցներում ապակեպլաստե պրոֆիլն օգնում է նվազեցնել կառուցման ծախսերը և խուսափել ծանր տեխնիկայի օգտագործումից՝ իր թեթևության և ամրության շնորհիվ:

Անգարներ


Պրոֆիլը ծառայում է որպես ավանդական նյութերի այլընտրանք՝ չպահանջելով սպասարկում և ապահովելով մինչև 50 տարվա օգտագործման ժամկետ, ինչով գերազանցում է մետաղական նյութերին:

Երեսպատում և ցանկապատում

Շվեյլերը կիրառվում է շենքերի երեսպատման և դեկորի համար՝ գույների և հյուսվածքների բազմազանության շնորհիվ, ինչը գրավում է դիզայներներին և ճարտարապետներին:

Տեխնոլոգիական հարթակներ և անցումներ

Ապակեպլաստե շվեյլերն օգտագործվում է այն վայրերում, որտեղ անհնար է կիրառել ծանր բետոնե և մետաղական կոնստրուկցիաներ:




Կոմպոզիտային կլոր խողովակ

Կլոր ապակեպլաստե խողովակը ձգված O-աձև պրոֆիլ է: Կլոր խողովակը ամենաշատ օգտագործվող պրոֆիլներից է թե որպես տարբեր նշանակության կառուցվածքների բաղադրիչ, թե որպես առանձին միավոր: Այս պրոֆիլի առանձնահատկություններն են լայնական բեռնվածքների հավասարաչափ բաշխումը և աերոդինամիկ լավ հատկությունները:

Կոմպոզիտային կլոր խողովակ գնելու, ինչպես նաև նախահաշիվ կազմելու և անհրաժեշտ նյութի քանակը հաշվարկելու հարցում Ձեզ կօգնեն մեր մենեջերները: Նրանք նաև կաջակցեն ձեզ ընտրել նյութեր, որոնք համապատասխանում են անհրաժեշտ տեխնիկական բնութագրերին: Մենք միշտ պատրաստ ենք խորհուրդ տալ Ձեզ այլ տեսակի կոմպոզիտային պրոֆիլների ձեռքբերման և կիրառման վերաբերյալ, որոնք մենք արտադրում ենք:

Օգտագործում

Ապակեպլաստե կլոր խողովակները կիրառվում են արդյունաբերության տարբեր ոլորտներում, ինչպես ինքնուրույն կառուցվածքներում, այնպես էլ որպես կապակցող հանգույցներ և տարրեր: Էներգետիկայում ապակեպլաստե կլոր խողովակները օգտագործվում են որպես մեկուսիչ ձողեր, ինչպես նաև անտենաների հենասյուներ: Ավելին, դրանք լայնորեն կիրառվում են որպես պարիսպների կառուցվածքներ: Այդ խողովակները նաև բարձրացնում են կառույցների ամրությունն ու ամրապնդում կապերը տարբեր կառուցվածքների տարրերի և հանգույցների միջև: Ապակեպլաստե կլոր խողովակները օգտագործվում են նաև որպես տարբեր գործիքների համար բռնակներ:





Կոմպոզիտային բազրիքներ

Կոմպոզիտային բազրիքը հանդիսանում է Ս-աձև ձգված պրոֆիլ՝ որը պատրաստված է ապակեպլաստիկից: Նախատեսված է վանդակաճաղերի վրա տեղադրման համար, ինչպես նաև հնարավոր է ամրացնել առանձին՝ պատին: Բազրիքների օգտագործման հիմքում ընկած են դիմացկունությունն ու անվտանգությունը:

Կոմպոզիտային բազրիք գնելու, ինչպես նաև նախահաշիվ կազմելու և անհրաժեշտ նյութի քանակը հաշվարկելու հարցում Ձեզ կօգնեն մեր մենեջերները: Նրանք նաև կաջակցեն ձեզ ընտրել նյութեր, որոնք համապատասխանում են անհրաժեշտ տեխնիկական բնութագրերին: Մենք միշտ պատրաստ ենք խորհուրդ տալ Ձեզ այլ տեսակի կոմպոզիտային պրոֆիլների ձեռքբերման և կիրառման վերաբերյալ, որոնք մենք արտադրում ենք:

Օգտագործում

Կոմպոզիտային բազրիքներն իսկապես հարմարավետ, գեղագիտական և պրակտիկ են: Կոմպոզիտային բազրիքների և մետաղականների միջև հիմնական տարբերությունը դրանց պրակտիկության և օգտագործման հարմարավետության մեջ է: Կոմպոզիտային պրոֆիլը, անկասկած, հանդիսանում է մետաղին գերազանցող այլընտրանք . այն չի պահանջում պրոֆիլակտիկ խնամք, սպասարկում կամ ներկում: Օգտագործման ժամկետը մի քանի անգամ ավելի երկար է: Ցածր ջերմահաղորդականության շնորհիվ հպման ժամանակ այն սառը չի զգացվում, իսկ արևային ուժեղ ճառագայթների տակ ձեռքը չի այրում:





Կոմպոզիտային ուղղանկյուն խողովակ

Ուղղանկյուն կոմպոզիտային խողովակը □ ձևավորված ձգված պրոֆիլ է՝ պատրաստված ապակեպլաստից: Բարձր ամրության և համեմատաբար ցածր քաշի շնորհիվ, ապակեպլաստե ուղղանկյուն խողովակը լայնորեն օգտագործվում է շինարարության մեջ, կարկասային կառուցվածքների մեջ, որպես հենարաններ, ծածկեր և կառուցվածքային տարրեր: Ունի էսթետիկ արտաքին տեսք:

Կոմպոզիտային ուղղանկյուն խողովակ գնելու, ինչպես նաև նախահաշիվ կազմելու և անհրաժեշտ նյութի քանակը հաշվարկելու հարցում Ձեզ կօգնեն մեր մենեջերները: Նրանք նաև կաջակցեն ձեզ ընտրել նյութեր, որոնք համապատասխանում են անհրաժեշտ տեխնիկական բնութագրերին: Մենք միշտ պատրաստ ենք խորհուրդ տալ Ձեզ այլ տեսակի կոմպոզիտային պրոֆիլների ձեռքբերման և կիրառման վերաբերյալ, որոնք մենք արտադրում ենք:

Օգտագործում

Այս կոմպոզիտային ուղղանկյուն պրոֆիլները օգտագործվում են կարկասային շինարարության, կամուրջների կառուցման, ճանապարհների ցանկապատերի կառուցման, ափամերձ տարածքների, աստիճանավանդակների և սպասարկման հարթակների կառուցապատման համար: Ապակեպլաստե կոմպոզիտային պրոֆիլը, շնորհիվ իր դիմացկությանը մաշվածությանը և ագրեսիվ միջավայրերին, անկասկած անփոխարինելի է քիմիական և նավթագազային արդյունաբերության համար, անմիջապես ջրի մեջ և խիստ խոնավ տարածքներում տարբեր կառույցների շինարարության համար:



Կոմպոզիտային քառակուսի խողովակ

Քառակուսի խողովակը պատրաստված ապակեպլաստից

□ – ձևավորված (քառակուսի) ձգված պրոֆիլ է: Բարձր ամրության և համեմատաբար ցածր քաշի շնորհիվ քառակուսի կոմպոզիտային խողովակները լայնորեն օգտագործվում են շինարարության մեջ, կարկասային կառուցվածքների մեջ, որպես հենարաններ, ծածկեր և կառուցվածքային տարրեր: Ունի էսթետիկ արտաքին տեսք:

Կոմպոզիտային քառակուսի խողովակ գնելու, ինչպես նաև նախահաշիվ կազմելու և անհրաժեշտ նյութի քանակը հաշվարկելու հարցում Ձեզ կօգնեն մեր մենեջերները: Նրանք նաև կաջակցեն ձեզ ընտրել նյութեր, որոնք համապատասխանում են անհրաժեշտ տեխնիկական բնութագրերին: Մենք միշտ պատրաստ ենք խորհուրդ տալ Ձեզ այլ տեսակի կոմպոզիտային պրոֆիլների ձեռքբերման և կիրառման վերաբերյալ, որոնք մենք արտադրում ենք:

Օգտագործում

Այս կոմպոզիտային քառակուսի պրոֆիլները օգտագործվում են կարկասային շինարարության, կամուրջների կառուցման, ճանապարհների ցանկապատերի կառուցման, ափամերձ տարածքների, աստիճանավանդակների և սպասարկման հարթակների կառուցապատման համար: Ապակեպլաստե կոմպոզիտային պրոֆիլը, շնորհիվ իր դիմացկությանը մաշվածությանը և ազդեցիվ միջավայրերին, անկասկած անփոխարինելի է քիմիական և նավթագազային արդյունաբերության համար, անմիջապես ջրի մեջ և խիստ խոնավ տարածքներում տարբեր կառույցների շինարարության համար:






Կոմպոզիտային վանդակաճաղերի տեսակները

Ինչպես ապակեպլաստե պրոֆիլները վանդակաճաղերը ունեն հետևյալ առավելությունները.

- Հակակոռոզիոն հատկություն
- Երկուղղված դիմադրություն
- Բարձր հարվածադիմացկունություն
- Ուլտրամանուշակագույն (UV)


ճառագայթների հանդեպ դիմացկունություն

Այս վանդակաճաղերը հիմնականում արտադրվում են 30-40 մմ բարձրությամբ պրոֆիլներից, բայց ցանկության դեպքում դրանք կարող են լինել արտադրված այլ բարձրություններով:




Խորշավոր մակերես

Վանդակաճաղը կարող է ունենալ խորշավոր մակերես: Խորշավոր մակերեսը սահմանվում է որպես հարթության մակերես, որը կարծրացման ընթացքում ներս է կորանում: Ստացված կառուցվածքային եզրերը ապահովում են բարձր հակասահող հատկություն:




Հարթ մակերես

Վանդակաճաղի մակերեսը կարող է լինել հարթ:



Ավազով մշակված մակերես

Հակասահող ավազե մակերեսը ստացվում է խորշավոր մակերեսին հակասահող ավազով մշակելու միջոցով:



Փակ մակերես

Փակ մակերեսը ստացվում է ցանցաձև մակերեսը թիթեղի հետ համակցելով՝ ստեղծելով չսահող փակ մակերես:



Կոմպոզիտային վանդակաճաղերի բնութագրերը

Կրակին դիմադրությունը

Կոմպոզիտային վանդակաճաղերը թույլ չեն տալիս կրակին տարածվել՝ խեժի մեջ պարունակվող հատուկ հավելումների շնորհիվ:

Էլեկտրամեկուսիչ հատկությունը

Կոմպոզիտային վանդակաճաղերը դիէլեկտրիկ են, ուստի իդեալական են այն տարածքների համար, որտեղ պահանջվում է էլեկտրամեկուսացում:

Հակասահող հատկությունը

Արդյունաբերության մեջ ամենահաճախ հանդիպող դժբախտ պատահարները սայթաքումներն ու ընկնումներն են: Մեր հակասահող մակերեսներով վանդակաճաղերի ընտրությամբ կարող եք նվազեցնել այդ ռիսկը:

Ամրություն


Համեմատած այլ նյութերի հետ, կոմպոզիտային վանդակաճաղերն ամրություն/զանգված հարաբերակցության պարագայում ունեն բարձր ցուցանիշներ: Վանդակաճաղերը ամուր և դիմացկուն են, նախատեսված են երկարաժամկետ օգտագործման համար: Ի տարբերություն պողպատի՝ պահպանում են իրենց ձևը և գույնը, կայուն են քիմիական ազդեցությունների պարագայում:

Ճկունություն և էրգոնոմիկա

Վանդակաճաղերն ունեն ճկուն կառուցվածք և ապահովում են հարմարավետ և կայուն մակերես: Էրգոնոմիկ աշխատանքային հատակը նվազեցնում է վնասվածքների հավանականությունը, բարձրացնում արտադրողականությունը և ստեղծում ավելի բարենպաստ աշխատանքային միջավայր:

Կոռոզիայի չենթարկվելու հատկությունը

Կոմպոզիտային վանդակաճաղերի հիմնական հատկանիշներից է կոռոզիայի չենթարկվելը: Մեր վանդակաճաղերը լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում՝ շնորհիվ իրենց յուրահատուկ բաղադրության: Դրանք չեն քայքայվում, չեն ժանգոտվում և կարող են օգտագործվել տարիներ շարունակ՝ առանց լրացուցիչ մշակման կամ ներկման անհրաժեշտության:





Ապակեպլաստե պրոֆիլների մոնտաժ

Ապակեպլաստե պրոֆիլները շատ ավելի թեթև են, քան մետաղական նյութերը, ինչը հեշտացնում և արագացնում է մոնտաժման աշխատանքները, ինչպես նաև նվազեցնում է աշխատանքային ծախսերը. նյութի թեթևությունը հեշտացնում է տեղափոխումը և տեղադրումը՝ նվազեցնելով հարակից ծախսերը:

Այս պրոֆիլները հեշտ են մշակվում. դրանք կարելի է սղոցել, ծակել, մշակել ֆրեզով և սրել առանց մեծ ջանքերի: Բացի այդ, ապակեպլաստե պրոֆիլները կարող են հավաքվել պտուտակներով, գամի, սոսնձի միջոցով, ինչը հեշտացնում է հավաքման գործընթացը և թույլ է տալիս ստեղծել ցանկացած բարդության կոնստրուկցիա:

Ապակեպլաստե պրոֆիլները առանձնանում են շահագործման երկար ժամանակահատվածով և դիմացկունությամբ արտաքին ազդեցությունների նկատմամբ, ներառյալ քիմիական նյութերը, խոնավությունը և ջերմաստիճանի տատանումները: Դրանք չեն փտում և չեն ենթարկվում կոռոզիայի, պահպանելով իրենց հատկությունները շահագործման ամբողջ ընթացքում:

Այսպիսով, ապակեպլաստե պրոֆիլների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել մոնտաժման ժամանակն ու ծախսերը և բացառել հետագա սպասարկման անհրաժեշտությունը՝ դարձնելով դրանք տնտեսապես արդյունավետ ընտրություն բազմաթիվ նախագծերում օգտագործելու համար:

Կոմպոզիտ պրոֆիլների կիրառման օրինակներ



Բարձր մեխանիկական ամրություն ունեցող կոմպոզիտ պրոֆիլները կարող են օգտագործվել հովացման աշտարակների կառուցման մեջ:



Փայտե դիզայնով մեր կոմպոզիտ պրոֆիլների միջոցով, որոնք ունեն բարձր կոռոզիոն և ուլտրամանուշակագույն ճառագայթներից (UV) պաշտպանվածություն, կարող եք ստեղծել բազմազան արտադրանքներ:





Կոմպոզիտ պրոֆիլների կիրառման օրինակներ

Դուք կարող եք օգտագործել մեր կոմպոզիտային նյութերը դիալեկտիկական հատկություններով այն ոլորտներում, որտեղ ձեզ անհրաժեշտ է էլեկտրամեկուսացում:



Կոմպոզիտային քառակուսի խողովակների և վանդակաճաղերի տարբեր չափսերի միջոցով պատրաստում ենք աստճաններ, տեխնոլոգիական հարթակներ և անցումներ:





Կոմպոզիտ պրոֆիլների կիրառման օրինակներ

Բազրիքներ


Բազրիքները կամ խողովակների կարող են արագ հավաքվել միացնող դետալներով, որոնք պատրաստված են չժանգոտվող պողպատից կամ կոմպոզիտ դետալներով՝ արտադրված SMC համաձուլման մեթոդով: Քանի որ դրանք կարելի է արագ և հեշտությամբ միացնել, կարճ ժամանակում դրանք կարող են տեղադրվել շատ մեծ տարածքների վրա: Դրանք դիմացկուն են և կարող են օգտագործվել երկար տարիներ:



Աստիճաններ պաշտպանական բազրիքներով

Շուրջ բոլորը պաշտպանված աստիճանները պատրաստված են կոմպոզիտային նյութերից: Դրանք կարող են օգտագործվել մաքրման օբյեկտներում և գործարաններում և շահագործվել տասնյակ տարիներ առանց որևէ սպասարկման կամ ներկման: Այսպիսի աստիճանները կարող են արտադրվել տարբեր չափսերով և գույները, դրանք չեն ժանգոտվում, հրդեհակայուն են, անվտանգ և ֆունկցիոնալ են:





ԿՈՄՊՈԶԻՏԱՅԻՆ ՏՆԵՐ

Կարկասային մոդուլային տները կոմպոզիտ նյութերից

Մեր Ընկերությունը միակն է տարածաշրջանում, որը ոչ միայն արտադրում է ապակեպլաստե կոմպոզիտային նյութեր, այլև ապակեպլաստից և նորարարական նյութերից արտադրում է մոդուլային կարկասային տներ, որոնք համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Մեր կոմպոզիտային տները չեն ենթարկվում կոռոզիայի, չեն փտում, թոյլ չեն տալիս բորբոսի, սնկերի, կրծողների զարգացում, խոնավամեկուսիչ են, չեն առաջացնում ջերմային ընդարձակումներ և փոխանցումներ, հեշտ կուռուցվում են: Տունը կառուցվում է առանց բետոնային հիմքի: Այն ունի բարձր մակարդակի ջերմա և ձայնամեկուսացում:



Միացնող դետալներ

